ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.03.2019թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Վահագն Ավագյանը , Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը,Սեյրան Ղամբարյանը, Արման Ափինյանը, Վահե Դոխոյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արևիկ Լոքյանը, Սեյրան Աղաբեկյանը :

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Էրիկ Մովսիսյանը, Կարեն Դավթյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Կարինե Ղուկասյանը, Արմեն Ավետյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը,Արման Սիրադեղյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:

Նիստից բացակայում էին՝

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

Տիգրան Նազարյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Սուրեն Կարապետյանը:

Նիստին մասնակցում էր նաև ՀՀ Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, մարզպետարանի և համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, ուսանողներ, քաղաքացիներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.05-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2019 թվականի 19.03.2019 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

Կողմ՝ 29, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում 2018-2021թթ. զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2018 թվականի հաշվետվությունները հաստատելու մասին:

   զեկ. Վ.Գրիգորյան
   զեկ. Լ.Դավթյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

   զեկ. Լ.Դավթյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

   զեկ. Լ.Դավթյան

4. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   զեկ. Վ.Գրիգորյան

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին:

   զեկ. Ա.Օհանյան

6. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   զեկ. Ա.Օհանյան

7. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ:

   զեկ. Ա.Հովհաննիսյան

8. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ:

   զեկ. Ա.Հովհաննիսյան

9. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
զեկ. Գ.Բաղյան
10. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 103-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ.Կ.Պառավյան

11. Վանաձոր համայնքի «Նեցուկ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին:

զեկ. Վ.Դավիթավյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին:

զեկ. Վ.Դավիթավյան
13. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

զեկ. Ս.Աբովյան
14. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 121 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ս.Աբովյան

15. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող, Զորյան փողոցի թիվ 24 հասցեում «Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության զբաղեցրած հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին:

զեկ. Ս.Աբովյան
16. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

զեկ. Ս.Աբովյան
17.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ.՝ Մ.Ասլանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. **ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում 2018-2021թթ. զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2018 թվականի հաշվետվությունները հաստատելու մասին:

Նախագծի վերաբերյալ ներածական խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանը, ով հակիրճ ներկայացրեց ոչ միայն նախորդ տարվա ձեռքբերումները, այլ նաև այն խոչընդոտները, որոնք օբյեկտիվորեն թույլ չտվեցին լիարժեք իրականացնել պլանավորվածը և գրանցել ավելի մեծ արդյունքներ որոշ ոլորտներում: Որպես օրինակ, նշվեց իրավական տեսակետից գնումների ընթացակարգի անարդյունավետությունը, երբ չի սահմանափակվում առաջարկի նվազագույն շեմը:
ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում 2018-2021թթ. զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2018 թվականի հաշվետվությունները ներկայացվեցին տեսանյութի ձևաչափով:

Հաշվետվությունների ներկայացումից հետո ելույթ ունեցավ Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը: Նա կարևորեց Վանաձորի համայնքապետարանի արդյունավետ գործունեությունը՝ նշելով, որ ամենափոքր թերացումներն անգամ լուրջ ազդեցություն են ունենում մարզի ընդհանուր ցուցանիշների վրա: Անդրեյ Ղուկասյանը կարևորեց համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը և ի լրումն, առաջարկեց բյուջեի ծախսային մասը հանրությանը ներկայացնել առավել բացված տարբերակով և հանգամանորեն:

Խոսելով նախորդ տարի Վանաձորում իրականացված ասֆալտապատման աշխատանքներից՝ նշեց, որ այսուհետ ևս դրանք խստագույնս վերահսկվելու են, և անորակությունը պարզապես չի ընդունվելու: Առհասարակ խիստ վերահսկողություն պետք է սահմանվի ցանկացած շինաշխատանքի նկատմամբ:

Մարզպետն իր խոսքում ողջունելի համարեց այն, որ Վանաձորը ներկայացրել է սուբվենցիոն 7 ծրագիր: Նա հույս հայտնեց, որ դրանք կհաստատվեն և կիրականացվեն արդյունավետ՝ ի նպաստ Վանաձորի բնակչության:

Մարզպետը նաև կոչ արեց մարտի 23-ին ակտիվորեն մասնակից դառնալ համապետական շաբաթօրյակի աշխատանքներին:

Արձագանքելով մարզպետի ելույթին, Մամիկոն Ասլայանը հավաստիացրեց, որ հերթական համապետական շաբաթօրյակին էլ Վանաձորը ակտիվ մասնակցություն կունենա, ինչպես նախորդ տարիներին և հիշեցրեց, որ նախկինում Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից շաբաթօրյակների արդյունքների ամփոփումից հետո Վանաձոր համայնքը ճանաչվել է լավագույն համայնքերից մեկը: Ինչ վերաբերում է թափանցիկ աշխատանքին, ապա «Ասպարեզ» Ժուռնալիստների ակումբի կողմից համայնքների թափանցիկ աշխատանքի մոնիտորինգի արդյունքում Վանաձորը համարվել է առավել թափանցիկ գործունեություն իրականացնող համայնքապետարան: Ինչ վերաբերում է բյուջեի ծախսային մասի առավել բացված տարբերակին, ապա այն նախապես ներկայացված է համայնքապետարանի պաշտոնական էջում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, դեմ՝ 11, ընդունվեց որոշում:

Մինչ օրակարգի հաջորդ հարցին անցնելը նիստը վարողը շնորհավորեց «Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության նոր անդամներ Արմեն Սիրադեղյանին և Արմեն Ավետյանին և մաղթեց նրանց արդյունավետ աշխատանք: Օգտվելով հնարավորությունից, համայնքի ղեկավարը նաև շնորհավորեց ավագանու կին անդամներին և նիստին ներկա կանանց ու աղջիկների մարտի 8-ը, ինչպես նաև գարնանային տոն համարվող կանանց ու մայրերի մեծարման միամսյակի առթիվ:
Նիստի վարումը շարունակեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արկադի Փելեշյանը:

2. **ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 10, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում:

3. **ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 17,դեմ՝ 8, ձեռնպահ՝ 3, ընդունվեց որոշում:

4. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 27, ընդունվեց որոշում:

5. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում:

6. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:

7. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Ավագանու անդամ Վահե Կռոյանն առաջարկեց ավագանու անդամ Անահիտ Կարապետյանի թեկնածությունը, որպես լիզորված անձ:

Զեկուցողն առաջարկեց հաստատել Անահիտ Կարապետյանի թեկնածությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:

8. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Ավագանու անդամ Արտյոմ Գրիգորյանն առաջարկեց ավագանու անդամ Վահե Դոխոյանի թեկնածությունը, որպես լիզորված անձ:

Զեկուցողն առաջարկեց հաստատել Վահե Դոխոյանի թեկնածությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ _ Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 103-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի «Նեցուկ ՀԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 121 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող, Զորյան փողոցի թիվ 24 հասցեում «Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության զբաղեցրած հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

16. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Բուռն քննարկումների արդյունքում ավագանու անդամներ Վահե Կռոյանը և Դավիթ Հակոբյանն առաջարկեցին հաստատել նոր բովանդակությամբ , առանց որոշման նախագծի 1բ -2 կետի (Թումանյան հրապարակ , թիվ 1/11-1 հողամաս , 0.0027 հա, կադաստրային ծածկագիր -06-001-0433) և 1բ- 11 կետի (Լոռվա խճ., 2-1/1 հողամաս , 0.03938 հա, կադաստրային ծածկագիր -06-001-0732-0078):

Ավագանու անդամ Արտյոմ Գրիգորյանն առաջարկեց քվերակել նախագիծը նոր բովանդակությամբ, առանց որոշման նախագծի 1բ -2 կետի (Թումանյան հրապարակ , թիվ 1/11-1 հողամաս , 0.0027 հա, կադաստրային ծածկագիր -06-001-0433) :

Սահմանված կարգով նիստը վարողն առաջինը քվեարկության դրեց հաստատված օրակարգի նախագիծը՝ « Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին »

Քվեարկությամբ, կողմ՝ 3, դեմ՝ 21, որոշում չընդունվեց:

Նիստը վարողի կողմից քվեարկության դրվեց հաստատված օրակարգի նախագիծը՝ «Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին», սակայն Վահե Կռոյանի և Դավիթ Հակոբյանի բովանդակային փոփոխության առաջարկով:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

17. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2019 թվականի ապրիլի 26-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի ապրիլի 26-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11.00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը